

ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ

«ԱՁԴԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Պզտիկ - մզտիկ կը յայտնէ՝

ՇՆՈՐՈՒՄԻ ՆՈՐ ՏԱՐԻ

ԵՒ Ա. ԾՆՈՒՆԴ

Իր բոլոր ընթերցողներուն եւ աշխարհի
 իր բոլոր բարեկամներուն...

- Միլատ մածիտ ուա աամ սայիտ (արաբերէն)
- Ժուայեո Նուէ է Պոն Անէ (ֆրանսերէն)
- Մերի Քրիսմըս էնտ հեփի Նիու եիր (անգլերէն)
- Ֆոհլիի վայնախթըն (գերմաներէն)
- Քունկ հիս հսին Նիէն Պինկ Չու Ճէն Թան (Չինարէն, մանտարին)
- Ֆելիս Նալիտատ Ի Փրոսպերո Անիո Նուէլո (սպաներէն)
- Փոպորեկլեայոա ս փրապանիքոյ Աոպիտեթթա Ի ս Նոլիս Կոտոմ (ռուսերէն)
- Քալա Քրիսթոյէնա Քի'էֆթիհիանեմա օ Քենուրիոնս Քրոնոս (լուսարէն)
- Պուն Նաթայէ է ֆելիէ Անո Նուլո (իտալերէն)
- Ճինէն Օմետթթօ, Քուրիսումասու Օմետթթօ (ճապոներէն)

ՄԵՐ ՅԱՁՐՈՒԴ ԹԻՒԸ՝

ՈՒՐԲԱԹ, 16 ՅՈՒՆՈՒԱՐ 2004

Այս թիւին հետ **ՆՈՒԷՐ** 2004ի օրացոյցը

ԱՆՍԽԱԼ ԳՐԵՆՔ 2003

Անմիջապէս բացէք էջ 2՝ գիտնալու համար «Անսխալ գրենք 2003»ի արդիւնքները:

ملحق أزياءك




«ԱՆՍԽԱԿ ԳՐԵՆՔ 2003»

Պլատիկ-Մպտիկը շատ ուրախ է, գիտէք ինչո՞ւ, որովհետեւ երկրորդ տարին ըլլալով կազմակերպուեցաւ «Անսխակ գրենք» ուղղագրական մրցումը եւ... եւ այս տարի փոխանակ 2009 աշակերտներու, մրցումին մասնակցեցան շուրջ 400 աշակերտներ 21 վարժարաններէ. այսինքն 7 վարժարաններ եւս միացան այս իւրայատուկ նախաձեռնութեան: Յիշեցընենք, որ 2002ին 14 վարժարաններ մասնակցած էին: Աւելին. 2003ի «Անսխակ գրենք»ը ուրախացուց զիս, որովհետեւ, ըստ երեւոյթին, մէկ տարուան ընթացքին դուք աւելի ծիգ թափեցիք մեր մայրենի լեզուն սորվելու եւ իւրացնելու համար: Փաստօրէն այս տարի աւելի մեծ թիւով աշակերտներ անսխակ գրեցին եւ վստահ եմ, որ 2004ին թէ՛ մասնակցողներուն թիւը պիտի շատնայ եւ թէ՛ անսխակ գրողներուն:

«Անսխակ գրենք»ի մրցումը այս տարի տեղի ունեցաւ Մեսրոպեան վարժարանի շրջափակէն ներս գտնուող «Յովհաննէս Պողոսեան» սրահին մէջ, կիրակի, 7 Դեկտեմբեր 2003ին, կէսօրէ ետք ժամը 3:00էն սկսեալ մինչեւ ժամը 6:00, մեր նախակրթարաններու 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանները մասնակցեցան յաջորդաբար: Մեր աշակերտները շատ լուրջ էին, ամէն մարդ կը փորձէր իր լաւագոյնը տալ, իսկ մրցումի աւարտին անոնք հիւրասիրուեցան եւ ստացան նուէրներ՝ գիրք, Պլատիկ-Մպտիկի փակցնելիք եւ զճաքաշ:

Ձեզի ըզեմ, որ եթէ այս ընթացքը շարունակուի եւ ձեր թիւը աւելնայ, Պլատիկ-Մպտիկի խմբագրական կազմը ստիպուած պիտի ըլլայ ա՛լ աւելի մեծ սրահ մը փնտռելու՝ ձեզ ընդունելու համար, յուսալով, որ նման ձեռնարկներով դուք աւելի կը քաջալերուիք ձեր գրութիւնները, զճագրութիւնները, նամակները դրկելու Պլատիկ-Մպտիկի եւ, ինչո՞ւ չէ, օր մըն ալ



դուք դառնաք Պլատիկ-Մպտիկի խմբագրական կազմը, բանաստեղծութիւններ գրէք, պատմութիւն ստեղծէ՛ք եւ օրինակ դառնաք ձեզմէ փոքրերուն:

Մի՛ հաւատաք, երբ ըսեն, որ հայերէնը կամ ուղղագրութիւնը դժուար է, դուք արդէն տուիք փաստը բոլոր լեզուներն ալ ծիշդ խօսելու եւ գրելու. նախապայմանը ձեր դասերուն հետեւիլն է, շատ գիրքեր ու թերթեր կարդալն է ու քաջութիւնը ունենալ արտայայտուելու:

Ես շատ կը սիրեմ իմ մայրենի լեզուն՝ հայերէնը. վստահ եմ, որ դուք բոլորդ ալ շատ կը սիրէ՛ք, ձեր ընկերները պէտք է քաջալերէ՛ք, որ իրենք ալ սիրեն. երբ լաւ բան մը կարդաք, փոխանցեցէ՛ք ձեր ընկերներուն, որպէսզի անոնք ալ կարդան եւ սորվին:

Իմա ձեր անհամբեր սպասած վայրկեանն է, որովհետեւ սրբագրողները վերջացուցած են սրբագրութիւնները, եւ մենք պէտք է անսխակ գրողներուն անունները յայտարարենք:

→ Զ. ԴԱՍԱՐԱՆ

-Լաւագոյն արդիւնք արձանագրած է Գարինա Բանսքէ-ճէյեան (մէկ սխալ) (Ս. եւ Բ. Արսլանեան Ճեմարան)

→ Ե. ԴԱՍԱՐԱՆ

-Անսխակ գրած են.

Նարէ Սալորեան (Ս. եւ Բ. Արսլանեան Ճեմարան), Քրիսթըլ Պապիկեան (Բայ Աւետարանական Քոլէճ), Լոռի Այնթապեան (Բայ Աւետարանական երկրորդական, Այնթապ), Լիւսի Զոմճեան (Աբգարեան), Նանոր Յարութիւնեան (Ս. եւ Բ. Արսլանեան Ճեմարան), Սինթիա Աննայեան (Ս. եւ Բ. Արսլանեան Ճեմարան), Զատիկ Ունանեան (Աքսոր Գասարճեան), Արիկ Աբրահամեան (Ս. եւ Բ. Արսլանեան Ճեմարան), Լոռի Ժամկոչեան (Ս. եւ Բ. Արսլանեան Ճեմարան):

-Մէկական սխալ.

Լարա Քէլէշեան (Եղիշէ Մանուկեան), Լոռի Սնապեան (Ս. եւ Բ. Արսլանեան Ճեմարան), Սարին Գանթարճեան

(Թորոսեան), Սուրէն Թապագեան (Ս. եւ Բ. Արսլանեան Ճեմարան), Գարին Մխիթարեան (Գէորգ Բարպոյեան), Դալար Պոյաճեան (Ս. եւ Բ. Արսլանեան Ճեմարան), Անդրանիկ Գասպարեան (Մեսրոպեան), Անի Առաքելեան (Ս. եւ Բ. Արսլանեան Ճեմարան):

→ Դ. ԴԱՍԱՐԱՆ


-Անսխակ գրած է

Գալին Մկրտիչեան (Ս. եւ Բ. Արսլանեան Ճեմարան)

-Մէկական սխալ.

Ռիթա Քէչեճեան (Գէորգ Բարպոյեան), Բերա Գրիգորեան (Գէորգ Բարպոյեան), Բալիկ Չէօրէքճեան (Եղիշէ Մանուկեան):

Վերոյիշեալ բոլոր աշակերտները պարտին ներկայանալ «Ազդակ»ի խմբագրատուն, Ճաղոյեան կեդրոն, Պուրճ համուտ, ստանալու համար իրենց նուէրները, Ճաքաթ, 3 Յունուարին, ժամը 10:30ին:



ՋԱՆԱԶԱՆ ԶԲԱՊՈՒՄՆԵՐՈՎ ԼԵՑՈՒՆ ԱՄԻՍ ՄԵՐ


Կաղանդի շրջանը միշտ եղած է մեծ ուրախության եւ պուարձութիւններու առիթ մը: Ինչպէս միշտ, այս տարի ալ մեզի առաջարկուած պրադումները շատ են եւ կանապան: Ա՛ռ թուղթ մատիտ, ուշադրութեամբ կարդա՛ հետեւեալ առաջարկները եւ կապակերպէ արձակուրդներդ՝ փորձելով ամէն օր տարբեր տեսակի պրադում մը ընտրել:

- Ա) ԿԱՊԱՆԴԻ ԵՐԳԱԲԱՆԴԵՍՆԵՐ
 - «Կարկաչ» երգչախումբը եւ պարիթոն Գէորգ Քերեմէթեան Կաղանդի իրենց երգահանդէսը կը ներկայացնեն 20 Դեկտեմբերին, «Մոնօ» սրահին մէջ (հեռ. 01/202422):
 - LAU համալսարանի Կաղանդի երգահանդէսը դարձած է աւանդական: 20-22 Դեկտեմբեր, LAU համալսարան (հեռ. 01/786456):

- Բ) ԹԱՏՐՈՆՆԵՐ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՆԵՐ
 - «Պարնիյ էթ տը Մըրքըս»-ի մէջ մենք պիտի հանդիպինք հաճելի կերպարներու, 19-20 Դեկտեմբեր, Ռուսական մշակութային կեդրոն (հեռ.

01/791561):
- «Սանթա ըրաունտ տը ուըրլտ» շարժուններով (միմոս), համակարգիչով պատրաստուած կենդանի նկարներով եւ երաժշտութեամբ խառն ներկայացում մըն է, 20-23 Դեկտեմբեր, «Մետինէ» (հեռ. 01-371962/4):

- «Պրէյք տենսի» ներկայացում, 25-28 Դեկտեմբեր եւ 2-4 Յունուար Փլանէթ տը Լա Տեքսթուրթ, (հեռ. 01-980650):
- «Սիպէլ Ուէթինկ ֆոր Սանթա» երգերով եւ պարերով թատրոն մըն է փոքրերուն համար: Մինչեւ 10 Յունուար, Լա Սաժէս սրահ, ժտէյտի, (հեռ. 03/998059):
- «Մարշան տը սապլը», թատրոն 4-10 տարեկաններու ուղղուած, ամէն կիրակի, մինչեւ Յունուար 2004 «Պէյ-



րութ» սրահ, (հեռ. 01/366085):

- «Քըլլօ մին Ջայպաթ», խամածիկներով ներկայացում մը, Ճաբաթ օրերը, «Մետինէ» սրահ (հեռ. 01-37162/4)


- Գ) ՅՈՒՅԱԲԱՆԻԿԵՐ
 - «Էնիմըլ սիթի», կենդանիներու սիրահարներուն համար, մինչեւ 24 Դեկտեմբեր, Ֆիլիպինոսքի, (հեռ. 01/497602):

- «Ճուկըր ին տը պատի», շաքարը մօտէն ծանչնալու համար, մինչեւ 31 Մայիս, «Փլանէթ տը լա տեքուվերթ», (հեռ. 01/980650/60):

(*) Իւրաքանչիւր ներկայացումի մանրամասնութիւնները գիտնալու համար մի՛ վարանիք հեռաձայնելու:

ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐ

Կաղանդի շրջանին մեծ խճողում կ'արձանագրուի նաեւ շարժապատկերի սրահներուն մէջ: Մենք ձեռքի համար ընտրեցինք երկու ծապաւէն:



- >>ԷԼՖ<<

Պատի պատկ տղայ մըն է, որ սխալմամբ կը մեճնայ Կաղանդ Պապային թզուկներուն հետ: Երբ ան չափահաս տարիքի կը հասնի, կ'անդրադառնայ, թէ ինք տարբեր է միւսներէն: Ան կ'որոշէ երթալ եւ փնտռել իր իսկական հայրը...

- «ՍՓԱՅ ՔԻՏՁ Յ-ՏԻ, ԲԵՅՄ ՕՎԸՐ»

Բոլոր արկածախնդրութիւններ սիրողները պիտի ուրախանան Քորթէյ ընտանիքի երկու լրտես հերոսներու վերադարձով: Այս անգամ անոնք պիտի պաշտպանեն փոքրերու ապատութիւնը չար խաղալիք շինողէ մը:



ՆՈՐ ՏԱՐԻ Է...



Կէս գիշերուան տասներկու վարկերը կը հնչեն. Նոր Տարի է: Մարդիկ վիրար կը շնորհաւորեն, իրարու կենաց կը խմեն, մաղթանքներ կը կատարեն:

Իւրաքանչիւր ժողովուրդ իրեն յատուկ ձեւով կը դիմաւորէ Նոր Տարին...

ՍՊԱՆԻԱ

Կէս գիշերուան ժամացոյցի տասներկու վարկերէն իւրաքանչիւրին հետ սպանացիները խաղողի հատիկ մը կ'ուտեն: Այս տասներկու հատիկները կը խորհրդանշեն տարուան իւրաքանչիւր ամսուան բախտը:

(ԿԵՆԱՅ՝ ՍԱԼՈՒՏ)

ԴԱՆԻԱ

Նոր Տարուան սկիզբը մեծ շուքով եւ աղմուկով նշելու համար երիտասարդները զօրաւոր կերպով կը վարձեն իրենց ընկերներուն տան դռները:

(ԿԵՆԱՅ՝ ՓՐՈՍՏԻՅ)

ՖՐԱՆՍԱ

Նոր Տարուան նախաճաշի սեղանին վրայ ֆրանսացիներուն կը սպասէ հսկայական քրեփ մը:

(ԿԵՆԱՅ՝ Ա ՎՈՒՅՐԸ ՍԱՆԹ)

...



ԿԱՊԱՆԴԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քրիստոսի ծնունդին հետ կապուած տօնակատարութիւններու պատմութիւնը կը հասնի մինչեւ 4000 տարի առաջ: Մի՛ վարմանաք, եթէ լսէք, որ այս կարեւոր տօնին հետ կապուած միջոցառումները, սովորութիւնները եւ աւանդութիւնները

գոյութիւն ունէին Քրիստոսի ծնունդէն դարեր առաջ: Իսկ այսօրուան մեր տօնակատարութիւններու մանրամասնութիւնները դարերու ընթացքին հաւաքուած են տարբեր ժողովուրդներու եւ մշակոյթներու աւանդութիւններէն:

Աշխարհի չորս կողմերը, Միջագետքէն սկսեալ (ներկայ Իրաքը) անցնելով Պարսկաստանէն, Բայաստանէն, Բաբելոնէն, Եւրոպայէն, Սկանտինաւեան երկիրներէն, Բիւն Յունական կայսրութենէն եւ հռոմէն, իւրաքանչիւրը իւրայատուկ ձեւով, մօտաւորապէս նոյն թուականներուն տօնախմբութիւններ կը կազմակերպէին:

ԱՐԵՒԵԼԸԻ ՄԷՋ

Միջագետքի երկիրները կը հաւատային, որ ամէն տարի ծմբան սկիզբը իրենց գլխաւոր աստուած Մարտուք կը կռուէր «քառսի հրէշներուն» դէմ. ժողովուրդը, որպէսզի Մարտուքի օգնէ, 12 օրերու վրայ երկարող տօնախմբութիւններ կը կազմակերպէր, որուն ընթացքին Միջագետքի թագաւորը տաճար կ'երթար եւ կ'երդնուր, որ հաւատարիմ է Մարտուքի. ըստ աւանդութեան, տօնախմբութեան 12րդ օրը թագաւորը պէտք է մեռնէր, որպէսզի յաջորդ տարի օգնէր Մարտուքի:

ԿԱՊԱՆԴ, ԹԵ ԱՄԱՆՈՐ

Եթէ Կաղանդ Պապան Ամանորին կու գայ ինչքան ան չի կոչուիր Ամանոր Պապա...

«Կաղանդ» կը նշանակէ «ամսամուտ», «ամսագլուխ, տարեգլուխ», ինչպէս կը բացատրէ հայերէն Արմատական բառարանը: Սակայն ուրկէ եկած է «Կաղանդ» բառը:

Ան լատինական ճագում ունի. յառաջացած է *calendae* բառէն, որ կը նշանակէ «ամսամուտ»:

Իսկ *calendae* բառը իր կարգին եկած է *calo*, «կոչել» բայէն:

Մենք այս բառին կը հանդիպինք նաեւ ուրիշ լեզուներու մէջ. *calendes* (ֆրանսերէն), *calendø* (անգլերէն), *collinda* (ռումաներէն), *Koleda* (պոլկարերէն), *kol'endre* (ալպաներէն)...

Բետեւաբար մենք ալ, մեր կարգին, ձեզի կը մաղթենք «Բարի Կաղանդ», «Բարի Ամանոր», «Բարի Նոր Տարի»...



Սարհան Գերսեմանեան, Դ. դասարան

ժողովուրդը, որպէսզի խնայէ թագաւորը, յանցապարտ մը կը կոչէր իբրեւ թագաւոր:


ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Եւրոպացիները ծմբան եղանակին կը վախճային, որ արեւը «չվերադառնայ», ուրեմն յատուկ տօնախմբութիւններով արեւի վերադարձին կը սպասէին: Նոյնը կը պատահէր սկանտինաւեան երկիրներուն մէջ, որոնք ծմբան օրերուն երբեք արեւուն լոյսը չէին տեսներ:


Միջոցառումները այլապէս էին՝ ճաշի կոծողով կրակ վառել, նուէրներու փոխանակում, տօնախմբութիւններ, տունէ տուն շրջող երգիչներ: Սկանտինաւիոյ մէջ ճառերու ծիւղերէն խնձորներ կը կախէին, որպէսզի իրենք վիրենք այն խաբկանքը տան, որ Գարունը վերադարձած է:

Բռնմէացիներուն տօնը կը սկսէր Դեկտեմբերի կիսուն եւ կը հասնէր մինչեւ Յունուար 1, որուն ընթացքին տեղի կ'ունենային կերուխում, նուէրներու փոխանակում. իսկ մշտադալար ճառերն ու ժպակները կը վարդարէին դահլիճները:

Երբ քրիստոնէութիւնը տարածուեցաւ եւ հաստատուեցաւ աշխարհի տարբեր երկիրներու մէջ, Քրիստոսի Ծնունդի տօնակատարութիւններուն միացան հին հեթանոսական ժամանակաշրջանէն հասած սովորութիւնները եւ տօնախմբութիւնները, որոնք ծոխացուցին եւ հարստացուցին տարուան ամէնէն հետաքրքրական ժամանակաշրջանը:



Լորի Թաշճեան, Դ. դասարան



ԿԱՊԱՆՊԻ ԿԱՄ Ս. ԾՆՈՒՆՊԻ ԾԱՌԸ

Բին հռոմեական սովորության մէջ դեկտեմբեր ամսուն հռոմեացիները իրենց Սաթուրնուս աստուծոյ տօնին առիթով սրահները կը վարդարէին ճառերով եւ ժապաւէններով: Միջին դարերուն գերմանացիները եւ սկանտինաւեան երկիրներու ժողովուրդներ ձմրան սկիզբը մշտադալար ճառեր սկսան դնել թէ՛ իրենց տուններուն մէջ եւ թէ իրենց դռներուն առջեւ՝ յուսալով, որ



Վաչէ Ղուկասեան, 10 տարեկան

աւանդութիւնը այլ ձեւով կը պատմէ կաղանդի կամ Ս. Ծնունդի ճառին պատմութիւնը: Աւանդութիւնը կ'ըսէ, որ երբ Յիսուս Մանուկ ծնաւ, աշխարհի վրայ ապրող բոլոր էակներն ու բոյսերը Բեթղեհեմ եկան պինք տեսնելու. եկան ձիթենին իր պտուկով, արմաւենին եւ եղեւինը. եղեւինը պտուղ չունէր... Իրեշտակը շատ մեղքցաւ անոր եւ փայլուն

աստղեր դրաւ անոր ծիւղերուն վրայ. Յիսուս երբ տեսաւ փայլուն եղեւինը, շատ ուրախացաւ. այդ օրէն ի վեր սովորութիւն է վարդարել ճառը եւ ուրախացնել Բրիստոսի ծնունդին հետ կապուած փոքրիկները:


աստղեր դրաւ անոր ծիւղերուն վրայ. Յիսուս երբ տեսաւ փայլուն եղեւինը, շատ ուրախացաւ. այդ օրէն ի վեր սովորութիւն է վարդարել ճառը եւ ուրախացնել փոքրիկները:

ՏԱՐԲԵՐ ԿԱՊԱՆՊԻ ԾԱՌ ՄԸ

Նոր Տարուան առաջին օրերը ուրախ մթնոլորտով դիմաւորելու համար ջիւնէ այս օրացոյց - կաղանդի ճառը...

ՊԵՏՔ ՈՒՆԻՍ
5 ծիւղեր կամ եղէգի կտորներ (1մ, 60 սմ., 50 սմ., 35 սմ., 25 սմ.), բարակ պարան, թերթեր, 15 սմ. տրամաչափով թաղար մը, գաճ կամ ճովափէն հաւաքուած խիճեր ու աւազ, խաւաքարտ, թուղթ ճակելու գործիք մը:

- ԻՆՉՊԷՍ**
- 1) Երկար եղէգը թաղարին մէջ ամրացուր ճմռթկուած թերթի էջերով:
 - 2) Չափահասի մը հետ գաճը պատրաստէ եւ վայն պարպէ թաղարին մէջ: Ձգէ, որ չորնայ: Գաճի փոխարէն կրնաս նաեւ թաղարի լեցնել աւազով կամ խիճերով:
 - 3) Միւս եղէգները պարանով կապէ երկար եղէգին վրայ, չափերով շարքը յարգելով:



(Ճար.ը՝ էջ 6)

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Ամանորին յոյն երեխաները իրենց կօշիկները կը դնեն կրակարանին մօտ՝ նուէրներ ստանալու յոյսով: Այս օրը ճանչցուած է նաեւ Սուրբ Պապիլի օրը. մեզի նման, յոյներն ալ իրենց նուէրները կը փոխանակեն այս թուականին:

(ԿԵՆԱՅ՝ ԻՍԼԿԻԱՆ)

ԱՐԺԱՆԹԻՆ

Յունուար մէկէն ծիշդ առաջ, կէս գիշերին, արժանթինցիները փողոցները կ'իջնեն դրացիներով տօնելու Նոր Տարին: Երեխաները հրավառութիւններ կը կատարեն Նոր Տարին փայլքով սկսելու համար:

(ԿԵՆԱՅ՝ ՍԱՈՒՏԷ, ՎԻՎԱ)

ԻՏԱԼԻԱ

Նոր Տարին իտալացիները յաճախ նարինջ կը բաժնեն իրենց ընտանիքին, բարեկամներուն եւ դրացիներուն:

(ԿԵՆԱՅ՝ ԱԼԱ ՍԱԼՈՒԹԷ ԿԱՍ ՉԻՆ ՉԻՆ)

ՃԱՓՈՆ


Կէս գիշերին կոնկ վանգակները 108 վարկեր կ'արձակեն 108 մեղքերուն համար, որոնք կրնան գործուիլ: Ճափոնցիները կը հաւատան, թէ այս գործիքները մտիկ ընելը սիրտը կը պարպէ եւ մեղքերէն կը մաքրէ Նոր Տարին սկսելու համար:


(ԿԵՆԱՅ՝ ԲԱՌԱՍՓԱՌԻ)

ԻՐԱՆՍՍԱ

Բախտ բերելու համար մարդիկ կէս գիշերին կը մտնեն տան առջեւի դուռէն եւ դուրս կ'ելլեն ետեւի դուռէն:

(ԿԵՆԱՅ՝ ԱՌՎԻԺԱՆ ՖՈՒԻ ՌԱՌՃՈՒ ՌՈՒԾ)





ԽՆՁ ԿՐ ԱՏԱԾԵՆ

10-15 բառով կարճիքի տո՛ւր
հեղտե՛նայ նիւթին մասին:
Պատասխանները հասցնել «ԱԶԴԱԿ»-ի
խմբագրատուն մինչեւ հինգշաբթի,
11 դեկտեմբեր 2003:

♦ Խնջ կը մաղթես

Նոր Տարուան առիթով

Նախորդ հարցումին կարճիքները

• Եթէ մէկը ուսում չէ առած եւ գրել կարդալ չի գիտեր, ես իրեն տունս կը հրաւիրեմ եւ կ'առաջարկեմ, որ ամէն օր տունս գայ, որպէսզի իմ սորվածներէս իրեն սորվեցնեմ:

Վարդենի Ռաջատուրեան

• Ինձի համար դժուար պիտի ըլլայ ուսումէ վրկուած պատանիներուն նիւթապէս օժանդակելը:

Ես կրնամ օգտակար դառնալ անոր, փոխանցելով իմ համեստ գիտելիքներս ու իրեն սորվեցնելով գրել ու կարդալ:

Ծովինար Տէկիրմէնճեան

• Իր ուսանելու իրաւունքէն վրկուած մանուկին կրնամ օգնել, օրուան ընթացքին երկու ժամ իրեն տրամադրելով կը բացատրեմ ուսումի կարեւորութիւնը, կը ծանցնեմ գիրերը, բառերը, թուաբանութիւն եւ կը նուիրեմ դասագիրքեր:

Անտի Եագուպեան

Ժամանցին պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ազդակ»-ի ճարթթ, 20 դեկտեմբեր 2003ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

ԹԻՒ 20 ԲԱՐՅԱՐԱՆԻ

ԾԱԳՈՂԸ

Բարցարան թիւ 20ի շահողը՝

Սօսի Տօնապետեան


(9 տարեկան)

շահեցաւ անցեալ ամսուան մրցումը:

Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ազդակ»-էն, «Ճաղպոյեան» կեդրոն:



Պլտիկ-Մպտիկին օգնէ 1 - 53 կէտերը իրարու միացնելու, կէս գիշերուան 12 վարկերէն առաջ:



Կրնամ օգնել Պլտիկ-Մպտիկին իր բարեկամներուն քով երթալու եւ Նոր Տարին տօնելու համար: Ան պիտի սկսի ժամը 11 նշանակող ժամացոյցէն, իւրաքանչիւր 10 վայրկեանը ժամացոյցէ ժամացոյց անցնելով՝ ելքի ծամբան գտնելու համար:

ՏԱՐԲԵՐ ԿԱՊԱՆԴԻ ԾԱՌ ԱՐ



Ճարունակուած՝ 5րդ էջէն

4) Գաւաթ մը գործածելով խաւաքարտին վրայ գծէ 18 կլորակներ: (20 դեկտեմբեր - 6 Յունուար) կտրէ պաննոք: Ծակելիք գործիքով ձակ մը բաց ձայրը:

5) Կլորակներուն վրայ օրերը դնելու համար կրնան գծել եւ ներկել: Սակայն թուանըջանները ընելու համար կրնան նաեւ գործածել ժապաւէնի կտորներ, հլուններ, բամպակ, բուրդ, թերթերուն մէջէն կտրուած թուանըջաններ... մի՛ մոռնար թուանըջանները գծելէ կամ փակցնելէ առաջ ներկելու կամ գունաւոր թուղթ փակցնելու խաւաքարտէ կլորակին վրայ:

6) Ծակին մէջէն թելի կտոր մը անցուր եւ կլորակներդ անցուր եղէգէ ծիւղերուն վրայէն:

7) Մի՛ մոռնար նաեւ մեծ աստղ մը դնել ձառին գազաթը:



ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 21

1.- Ո՞վ էր Միջագետքի գլխաւոր աստուածը: -----

2.- Ի՞նչ ըսել է «Կաղանդ» բառը: -----

3.- Ո՞վ գրած է «Նամակ Կաղանդ Պապային»:

Ամսուան հարցումին կրնան մասնակցիլ 6էն 12 տարեկան, աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք պայն հասցնել «ԱԶԴԱԿ»-ի


խմբագրատուն: Յաջող թիւով պիտի յայտարարուի մրցումը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

Անուն - Սականուն -----

Վարժարան -----

Ծննդեան թուական -----

Բեռնաձայնի թիւ -----



ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Նամակագրությունը նախ եղած է անձնական, սակայն շատ շուտ ան իր տեղը գտած է գրականության մեջ, որ արտադրած է թե՛ իրականություններ պատմող, թե՛ այ երեակայական գրություններով նամակներ:

Ժամանակին նամակագրությունը ամենն արագ միջոցն էր «հաղորդակցելու»: Այժմ անոր տեղը առած են էնթերնետը եւ հեռաձայնը: Սակայն, հակահակ ասոր, մարդիկ տակաւին կը շարունակեն գրել նամակներ՝ իրենց ժամանակը առնելով, մտածելով, աւելի լաւ շարադրելով...

Զէք կարծեր, թէ ժամանակն է նաեւ գրելու ուրիշ կարելոր նամակ մը... Կաղանդ Պապային ուղղուած: Ածապարեցէր Կաղանդի գիշերը հաճելի «անակընկալներու» առջեւ գտնուելու համար:

Ճուարմա՞ծ էք, չէք գիտեր ինչպէս շարադրել այդ նամակը. իբրեւ օրինակ՝ ահա՛ քանի մը տող Մուշեղ Իշխանի գրած Կաղանդ Պապային իր նամակէն:

3. Գ. – Մի՛ մոռնաք, որ կրնաք ձեր այս նամակներէն օրինակներ դրկել նաեւ Պատիկ-Մպտիկին, որ պիտի ընտրէ ամենն գեղեցիկ նամակը եւ պայն տպէ:

ՆԱՄԱԿ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ

Կաղանդ պապա,
իմ, այս նամակս առաջին
քե՛զ կը գրեմ ես ահա
եւ կարօտով կը յանձնեմ քու սուրբ
աջին:
Ո՛ւր ալ ըլլաս,
պիտի անշուշտ պայն կարդաս
եւ անհամբեր պիտի բռնես դուն կրկին
մեր տան ճանօթ հին ուղին:
...Մի՛ հաւատար իմ մասին
թռչուններու բերած այդ սուտ լուրերուն.

Ե՛ս եմ տիպարն ամենուն,
հեզն ու բարին
եւ ամենն արժանին՝
հրաշապան նուէրներուդ գոյնպոյն...
...հայրս կ'ըսէ՝ Մասինս է լոկ մե՞ծ ընձան,
որ դուն կրնաս օր մը բերել հայ տղոց,
որուն մէջ կայ ամեն բան –
աստղ ու լուսին ոսկեպօծ,
կրակ ու բոց,
հսկայ շուներ պահապան,
շղթայակապ հին քաջեր
եւ հրեղէն նժոյգներ...

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ ՄՈՒՇԵՂ ԻՃԽԱՆԻ

Մուշեղ Իշխան ծնած է 1913ին, Սիվրի հիսար, Անգարայի նահանգին մէջ: Դամասկոսի մէջ հայոց Ազգային վարժարանը եւ ապա Կիպրոսի Մելգոնեան վարժարանը (ուր իբրեւ ուսուցիչ ունեցած է 3. Օշական) յաճախելէ ետք, ան Պէյրուս կու գայ 1930ին եւ կը դառնայ գիշերօթիկ Լ. Ճանթի եւ Ն. Արքալեանի նոր բացած հայ ճեմարանին մէջ: Գինգ տարի ետք ան կը դառնայ ուսուցիչ նոյն դպրոցին մէջ:

Բարձրագոյն ուսումը ստացած է Պելժիթա՝ հետեւելով Պրիւքէլի համալսարանին մանկավարժութեան եւ գրականութեան ծիւղերուն:

Վերադառնալով Պէյրուս՝ ան իր կեանքը նուիրած է սերունդներու դաստիարակութեան, իբրեւ ուսուցիչ պաշտօնավարելով Ն. Փալանճեան ճեմարանին մէջ:

Ս. Իշխան գրել սկսած է 16 – 17 տարեկանին եւ անդադար շարունակած է գրել իր ամբողջ կեանքին ընթացքին:

Իր գործերէն յիշենք՝ «հացի եւ լոյսի համար», «հացի եւ սիրոյ համար», «Մեռնիլը որքան դժուար է», «Մնաս բարով մանկութիւն»:

Ս. Իշխան մահացաւ 12 Յունիս 1990ին, Պէյրուսի իր բնակարանին մէջ, սրտի տագնապի պատճառով:

ՍՈՒՐԻ ՆԻՔՈԼԱՍԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ



Գիտէ՞իր, թէ մեզի ճանօթ արդի Կաղանդ Պապային կերպարը եւ պատմությունը յառաջացած է 1822ին ամերիկացի պատուելի Քլէմընթ Քլարք Մուրի գրած մէկ բանաստեղծութենէն՝ «Ս. Նիքոլասի այցելութիւն մը»:

Մուր գաղափարը յղացած է ծիւնոտ գիշեր մը, երբ իր սահնակով կ'անցնէր Նիւ Եորքի փողոցներէն: Սահնակին վանգակները իրեն ներշնչած են ուրիշ սահնակի մը գաղափարը: Այս սահնակը կը քաշէին բեւեռային եղջերուներ, եւ որոնց վարիչը լեցուն փորով, կարմրադէմ եւ ժպտուն անձ մըն էր: Կարգ մը անձեր կ'ենթադրեն, թէ Մուր այս «Կաղանդ Պապային» տուած է իր հոլանտայի դրացիին դիմագիծը:

Պտոյտէն վերադարձն անմիջապէս ետք ան նստած է իր գրասեղանին առջեւ եւ յօրինած է Կաղանդ Պապան ներկայացնող եւ նուէրներու բաշխումը նկարագրող յիսուն վեց տողերով այս բանաստեղծութիւնը՝ իր վեց պատկերներուն իբրեւ նուէր:

Գերմանական ճագումով ամերիկացի գծագրիչ Թոմաս Նասթ 1862ին կը պատկերավարդէ Մուրի բանաստեղծութիւնը եւ Ս. Նիքոլասը կ'անուանէ Սանթա Քլոյ:



Պզտիկ – Ազտիկը հասած է նոյնիսկ մինչև
հեռաւոր Ովկիանիոյ ցամաքամասը,
Աւստրալիա: Բրայր Արոյեան Սիտնիէն մեկի
ղրկած է հետեւեալ բանաստեղծութիւնը:

ԲԱՅՐ ԻՄ

Բա՛յր իմ թանկագին,
Տուիր քո սիրտդ անգին,
Սիրեցիր զիս լիովին,
Սեղմեցիր քո կուրծքին:

Սորվեցուցիր երգել եւ աղօթել,
Վարժեցուցիր եկեղեցի յաճախել,
Սխալներս շտկեցիր,
Խրատներովդ լուսաբանեցիր:

Չկայ մէկը աշխարհի վրայ,
Քու փայլուն դէմքիդ նման,
Քու քաղցր ժպիտով,
Մնաս իմ հայրս սիրով:

ԲՐԱՅՐ ԱՐՈՅԵԱՆ

Զաւակ՝ Բայաստանեայց Աւետարանական
եկեղեցիի Սիտնի – Աւստրալիա



Պետիկ Գոյիւքեան,
9 տարեկան



Քալիկ Պալապանեան
7 տարեկան

Նախորդ թիւի պատկերները գծած են.

Դպրոց – Սթեֆանի Կարապետեան, 11 տարեկան

Պար – Երուանդ Ծալակեան, 9 տարեկան

Աշուն – Նունէ Սարգիսեան, 12 տարեկան



Մի մոռնար
Կաղանդ Պապայէն
Խնդրելու

ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿԻ
ԳԱԽԱԹԸ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ
ԼԱԽԱԳՈՅՆ ՆՈՒՒՆՐԸ



Գաւաթները կարելի է
գտնել հետեւեալ գրախանութներուն մէջ

– Բամապգային, Ծաղկոյեան կեդրոն, Պուրճ Բամուտ

– Նարեկացի, Պուրճ Բամուտ

– Obelix, Անթիլիաս